

ՄԻԱՄԱՎԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2017

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց բողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գործույթի էջերի դատարկ նասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գործույթը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարքուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարքում: Պատասխանների ճնարքի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Որտե՞ղ է ավարտվում թռչունների արյան շրջանառության մեծ շրջանը.

- 1) ձախ փորոքում
- 2) աջ նախասրտում
- 3) ձախ նախասրտում
- 4) աջ փորոքում

2 Ի՞նչ է տեղի ունենում ինֆուզորիայի նյութափոխանակության հեղուկ արգասիքների հետ.

- 1) հեռացվում են ցիտոպլազմայի արտաքին շերտում գտնվող՝ շշիկների նմանվող օրգանիդներով
- 2) ցիտոպլազմայից անցնում են հավաքող խողովակներ, ապա կծկվող վակուուներ և հեռացվում դրանցով
- 3) հեռացվում են ցիտոպլազմայում գտնվող բջջակլանով
- 4) կուտակվում են հավաքող խողովակներում և հեռացվում արտազատող անցքով

3 Որտե՞ղ են բացվում միջատների մալայիօյան անոքները.

- 1) կոյանոցի մեջ
- 2) հետնաղու մեջ
- 3) ճարպային մարմնիկի մեջ
- 4) կտնառի մեջ

4 Ո՞ր կենդանիներն ունեն փակ արյունատար համակարգ.

- 1) միջատները
- 2) աղեխորշավորները
- 3) օղակավոր որդերը
- 4) տափակ որդերը

5 Ինչի՞ առկայությամբ է մողեսը տարրերվում գորսից.

- 1) լյարդի
- 2) կրծքավանդակի
- 3) բոքերի
- 4) արյան շրջանառության երկու շրջանի

6 Հիդրայի նյարդային համակարգը ներկայացված է.

- 1) աստղաձև նյարդային բջիջներով
- 2) նյարդային խողովակով
- 3) նյարդային շղթայով
- 4) նյարդային բներով

7

Ինչպե՞ս է իրականացվում մարդու միզագոյացման հումորալ կարգավորումը.

- 1) վահանաձև գեղձի հորմոնների և կալցիումի խոնների միջոցով
- 2) մակերիկամների միջուկային և կեղևային շերտերի հորմոնների միջոցով
- 3) մակերիկամի միջուկային շերտի և մակուղեղի հորմոնների միջոցով
- 4) մակուղեղի և մակերիկամի կեղևային շերտի հորմոնների միջոցով

8

Ո՞ր խմբի արյուն ունեցող մարդկանց օրգանիզմում են սինթեզվում երկու տեսակի՝ A և B ազյուտինոգեններ.

- 1) երկրորդ
- 2) երրորդ
- 3) չորրորդ
- 4) առաջին

9

Ի՞նչ հիվանդություն է առաջանում A վիտամինի անբավարարությունից.

- 1) ցինգա
- 2) ռախիտ
- 3) քերի-քերի
- 4) հավկուրություն

10

Ո՞ր պնդումն է սխալ հեպարինի վերաբերյալ.

- 1) պոլիսախարիդ է
- 2) առաջանում է լյարդում և ժամանակ առ ժամանակ մղվում է արյան հուն
- 3) առաջանում է բրոմբոցիտների քայլայման ժամանակ
- 4) արգելակում է արյան մակարդումը

11

Ինչպե՞ս է կոչվում ածխաթթու գազ միացրած հեմոգլոբինը.

- 1) օրսիհեմոգլոբին
- 2) կարբօքսիհեմոգլոբին
- 3) կարբոհեմոգլոբին
- 4) վերականգնված հեմոգլոբին

12

Ի՞նչը չի մտնում մարդու ողի կառուցվածքի մեջ.

- 1) մարմինը
- 2) գլխիկը
- 3) ելունը
- 4) աղեղը

13

Ի՞նչ է տեղի ունենում մարդու օրգանիզմում արտաքին միջավայրի ջերմաստիճանի նվազման դեպում.

- 1) նեղանում են մաշկի մազանոթների լուսածերպերը
- 2) մաշկի արյունատար անոթները լայնանում են, և փոքրանում է արյան հոսքի արագությունը
- 3) աճում է ջերմատվությունը
- 4) մեծանում է արյան հոսքը դեպի մաշկ

14

Ի՞նչ է կատարվում ներշնչման ժամանակ մարդու օրգանիզմում.

- 1) միջկողային մկանների թուլացում
- 2) ստոծանու մկանների թուլացում
- 3) միջկողային մկանների կծկում
- 4) թոքերի ծավալի փոքրացում

15

Ո՞ր նյութերի մարսման խանգարմանը կհանգեցնի հաստ աղիում գտնվող մանրէների ռչնչացումը.

- 1) բաղանքանյութի
- 2) ճարպաթթուների
- 3) ամինաթթուների
- 4) գլյուկոզի

16

Ի՞նչ է տեղի ունենում մարդու օրգանիզմում արյան մեջ աղբենալինի քանակի ավելացման դեպում.

- 1) արագանում է սրտի աշխատանքը, բարձրանում է արյան ճնշումը
- 2) արյան մեջ նվազում է գլյուկոզի քանակությունը
- 3) լայնանում են արյունատար անոթները, սինթեզվում է մեծ քանակությամբ գլիկոգեն
- 4) սրտի աշխատանքը դանդաղում է, գլյուկոզի քանակն արյան մեջ՝ նվազում

17

Որտե՞ղ են գտնվում մարդու պարասինապաթիկ նյարդային համակարգի կենտրոնները.

- 1) ողնուղեղում և միջանկյալ ուղեղում
- 2) ողնուղեղում և կամքում
- 3) ողնուղեղում, երկարավուն և միջին ուղեղներում
- 4) ողնուղեղում, ուղեղիկում և երկարավուն ուղեղում

18

Նշված սպիտակուցներից որը՝ չի կատարում շարժողական գործառույթ.

- 1) ինսուլինը
- 2) դինեինը
- 3) ակտինը
- 4) ֆլագելինը

19

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Վիտամին A-ն լուծվում է ճարպում
- 2) ԱԵՖ-ը պահեստավորվում է քջում
- 3) ԱԵՖ-ի մոլեկուլի կառուցվածքը կայուն չէ
- 4) B խմբի վիտամինները լուծվում են ջրում

20

Ի-ՌՆԹ-ում նույնագույնությունը ո՞ր եռյակն է համապատասխանում ԴՆԹ-ի ԱԹԳ եռյակին.

- 1) ՈւԱԳ
- 2) ԱԱՑ
- 3) ԱԹՑ
- 4) ՈւԱՑ

21

Որո՞նք են այրոկարիոտներ.

- 1) սնկերը
- 2) բակտերիաֆազերը
- 3) բակտերիաները
- 4) նախակենդանիները

22

Կորիզակներում տեղի է ունենում.

- 1) ոիլրոսոմների մեծ և փոքր ենթամիավորմերի ձևավորումը
- 2) կորիզաքաղանքի ձևավորումը
- 3) ածխաջրերի և լիալիդների սինթեզը
- 4) սպիտակուցների սինթեզը

23

Պլաստիկ փոխանակության գործընթացի օրինակ է՝

- 1) ֆոտոսինթեզը
- 2) գլիկոլիզը
- 3) շնչառությունը
- 4) խմորումը

24

Ո՞ր քիմիական տարրն է մտնում քջի ուլտրամիկրոտարրերի խմբի մեջ.

- 1) ոսկին
- 2) յոդը
- 3) մանգանը
- 4) ֆոտորը

25

Աղիքային ցուպիկի T4 բակտերիաֆազի բաղադրության մեջ մտնում են՝

- 1) ԴՆԹ և սպիտակուց
- 2) ԴՆԹ և ՈՆԹ
- 3) ՈՆԹ և սպիտակուց
- 4) ԴՆԹ, ՈՆԹ և սպիտակուց

26

Ֆուռսինթեզի ընթացքում թթվածին առաջանում է.

- 1) ջրի քայքայման արդյունքում
- 2) ածխաթթու գազից պոկվելու հետևանքով
- 3) քլորոֆիլից պոկվելու հետևանքով
- 4) ԱԵՖ-ի սինթեզի արդյունքում

27

Ինչպե՞ս է կոչվում նախակենդանիների բջիջների բազմակի կիսումը.

- 1) Փրազմենտացիա
- 2) ոեգեներացիա
- 3) տրոհում
- 4) շիզոգոնիա

28

Ի՞նչ է կոչվում մեկ զույգ հոմոլոգ քրոմոսոմների ավելացումը.

- 1) հապլոիդիա
- 2) տրիտոմիա
- 3) անեուպլոիդիա
- 4) պոլիապլոիդիա

29

Ըլքայակցման բացակայության դեպքում ինչպիսի՝ հարաբերությամբ AaBb, aaBb, Aabb, aabb գենոտիպով առանձնյակներ կստացվեն, եթե խաչասերվեն AaBb և AaBb գենոտիպով առանձնյակներ.

- 1) 3:1
- 2) 4:2:2:1
- 3) 1:1:1:1
- 4) 1:2:1

30

Ի՞նչ է տեղի ունենում միտոզի անաֆազում.

- 1) դուստր քրոմոսոմները տարամիտվում են հակառակ քևեռներ
- 2) քրոմոսոմները գրավում են կենտրոնական դիրք
- 3) քրոմոսոմները կրկնապատկվում և պարուրվում են
- 4) սկսվում է ցիտոպլազմայի բաժանումը

31

Ո՞ր կենդանիների օրգանիզմում է հանդիպում արական հոմոզամետուրյուն.

- 1) կաթնասունների
- 2) դրոզոֆիլ պտղածանձի
- 3) թիթեռների
- 4) մարդկանց

32

Ինչպիսի՞ գենոտիպեր են ունեցել ծնողները, եթե այդ ընտանիքում բոլոր տղա երեխաները դալտոնիկ են, իսկ աղջիկները՝ դալտոնիզմի գենը կրողներ են.

- 1) $X^D X^d$ և $X^D Y$
- 2) $X^D X^D$ և $X^D Y$
- 3) $X^d X^d$ և $X^D Y$
- 4) $X^D X^d$ և $X^d Y$

33

Ո՞ր օրգանիզմները պոպուլյացիայի կազմի մեջ չեն մտնում.

- 1) տարբեր սեռների օրգանիզմները
- 2) մեկ տեսակին պատկանող օրգանիզմները
- 3) տարբեր տեսակներին պատկանող օրգանիզմները
- 4) տարբեր տարիքային խմբերի օրգանիզմները

34

Ինչպիսի՞ արդյունք է ստացվում երկիեւերոզիզոս առանձնյակի և հոմոզիզոս դոմինանտ առանձնյակի խաչաերման արդյունքում՝ երկու ալելներով էլ ոչ լրիվ դոմինանտուրյան և գեների անկախ բաշխման դեպքում.

- 1) 4 ֆենոտիպային և 4 գենոտիպային խմբեր
- 2) 2 ֆենոտիպային և 4 գենոտիպային խմբեր
- 3) 1 ֆենոտիպային և 4 գենոտիպային խմբեր
- 4) 2 ֆենոտիպային և 2 գենոտիպային խմբեր

35

Ո՞ր բույսը մակարույծ չէ.

- 1) սարացենիան
- 2) օմելան
- 3) ռաֆլեզիան
- 4) գաղաթը

36

Ո՞րն է ոչ կենսածին էկոլոգիական գործոն.

- 1) մրցակցությունը
- 2) խոնավությունը
- 3) գիշատչությունը
- 4) մակարուծությունը

37

Ո՞րն է պարտադիր փոխահավետ փոխազդեցության օրինակ.

- 1) ամենսալիզմը
- 2) կռոպերացիան
- 3) նուտուալիզմը
- 4) կոմենսալիզմը

(38-39) Խաչասերել են $AaBbCCddEe \times AabbccDdEE$ գենոտիպերով առանձնյակներին:

Ալելային գեների առաջին երեք զույգերում առկա է լրիվ դոմինանտություն, իսկ վերջին երկուտում՝ ոչ լրիվ: Տվյալ հատկանիշները պայմանավորող գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարբեր զույգերում:

38

Գտնել սերնդում հնարավոր ֆենոտիպերի թիվը.

- 1) 16
- 2) 36
- 3) 24
- 4) 54

39

Գտնել սերնդում հնարավոր գենոտիպերի թիվը.

- 1) 24
- 2) 54
- 3) 36
- 4) 16

40

Ծածկասերմ բույսի առէջներից մեկում առաջացել է 2000000 փոշեհատիկ: Քանի՞
սպերմիումներ են դրանք պարունակում.

- 1) 500000
- 2) 1000000
- 3) 2000000
- 4) 4000000

41

Ո՞ր օրգանական միացությունը (նշված է ձախ սյունակում) ածխաջրի ո՞ր խմբին
(նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն
ըստ հերթականության.

Օրգանական միացություն

- A. գլյուկոզ
- B. բաղանթանյութ
- C. խիտին
- D. ֆրուկտոզ
- E. գալակտոզ
- F. գլիկոգեն

Ածխաջրի խումբ

- 1. միաշաքարներ
- 2. բազմաշաքարներ

42

Բջջի ո՞ր օրգանոիդին (նշված է աջ սյունակում) ո՞ր ֆունկցիան (նշված է ձախ
սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն
հերթականության.

Ֆունկցիա

- A. բոլոր տեսակի սպիտակուցների կենսասինթեզ
- B. մասնակցություն բաժանման իլիկի ձևավորմանը
- C. լիզոսունների ձևավորում
- D. անօրգանական նյութերից օրգանական նյութերի
սինթեզ
- E. պաշարային սննդանյութերի կուտակում
- F. ժառանգական տեղեկատվության պահպանում և
հաղորդում
- G. պլազմային բաղանթի նորոգում ու աճ

Օրգանոիդ

- 1. կորիզ
- 2. բջջային կենտրոն
- 3. Գոլջիի ապարատ
- 4. պլաստիդ
- 5. ռիբոսոն

43

Ո՞ր իիվանդությունը (նշված է ձախ սյունակում) մուտացիաների ո՞ր ձևով է (նշված է աջ սյունակում) պայմանավորված: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Հիվանդություն

- A. ալրինիզմ
- B. «մլավողի սինդրոմ»
- C. հեմոֆիլիս
- D. Պատառի սինդրոմ
- E. Էրվարդսի սինդրոմ
- F. Մարֆանի սինդրոմ

Մուտացիաների ձև

- 1. գենային
- 2. գենոմային
- 3. քրոմոսոմային

44

Մարդու մեզի ո՞ր տեսակին (նշված է աջ սյունակում) ո՞ր առանձնահատկությունն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Առանձնահատկություն

- A. հնում է ծննկածն խողովակով
- B. հնում է հավաքող խողովակով
- C. բաղադրությամբ մոտ է արյան պլազմային
- D. լցնում է երիկամի պվազանը
- E. առաջանում է հետադարձ ներծծման արդյունքում
- F. լցնում է նեֆրոնի պատիճը
- G. առաջանում է ֆիլտրման եղանակով

Մեզի տեսակ

- 1. առաջնային
- 2. երկրորդային

45

Մարդու մկանային հյուսվածքի ո՞ր տեսակին (նշված է աջ սյունակում) ո՞ր բնութագիրն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Բնութագիր

- A. կազմված է իլիկածն բջիջներից
- B. սպիտակուցային թելիկները դանդաղ են կծկվում
- C. կազմում են հենաշարժիչ համակարգի մկանները
- D. ձևավորում է արյունատար անոթների պատի միջին շերտը
- E. կազմված է 10-12 սմ երկարություն ունեցող բջիջներից
- F. կազմված է բազմակորիզ բջիջներից

Մկանային հյուսվածք

- 1. հարք
- 2. միջաձիգ զոլավոր

46

Նշել գորտի օրգանիզմ օղի անցման և հեռացման միջև ընկած ժամանակահատվածում իրականացվող գործընթացների հաջորդականությունը.

1. օղը քթանցքերով անցնում է բերանակլանային խոռոչ
2. փակվում են քթանցքերի փականները
3. բերանակլանային խոռոչի հատակը բարձրանում է
4. օղը բոքերից դուրս է գալիս մարմնի պատերի և ներքին օրգանների մկանների կծկման շնորհիվ
5. օղը մղվում է դեպի թոքերը
6. բերանակլանային խոռոչում ստեղծվում է նոսրացած տարածություն
7. բերանակլանային խոռոչի հատակն իջնում է

47

Մարդու օրգանիզմում ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում ճարպերի փոխակերպման գործընթացները: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ճարպաթթուների և գլիցերինի ներթափանցում քարակ աղիների թափիկների մեջ
2. ճարպերի ներթափանցում ավշային մազանոթներ
3. ճարպերի ներթափանցում արյան մեջ
4. քարակ աղիների թափիկների էպիթելի բջիջներում օրգանիզմին բնորոշ ճարպերի սինթեզ
5. ճարպերի կուտակում ենթամաշկային բջջանքում
6. ճարպերի ճեղքում մարսողական ֆերմենտների ազդեցությամբ

48

Ի՞նչ հաջորդականությամբ է անցնում գրգիռը թքազատության պայմանական ռեֆլեքսի ռեֆլեքսային աղեղով: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. մեծ կիսագնդերի կեղևի սննդառական կենտրոնի դրդում
2. աշքի ցանցաթաղանթի ընկալիչների գրգռում լույսով
3. թքազատության հրահրում
4. տեսողական նյարդով նյարդային ազդակի անցում մեծ կիսագնդերի կեղևի տեսողական գրտի
5. նյարդային ազդակի հաղորդում շարժողական նյարդով
6. նյարդային ազդակի հաղորդում ժամանակավոր կապով

49

Ի՞նչ հաջորդականությամբ են իրականանում գործընթացները մարդու տեսողական վերլուծիչի գործառույթի իրականացման ժամանակ: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. լույսի ճառագայթների արտացոլում առարկայի մակերևույթից
2. լույսի ճառագայթների անցում եղջերաթաղանթով
3. տեսողական զգայության ձևավորում
4. ցանցաթաղանթի ընկալչական բջիջների գրգռում
5. նյարդային ազդակների հաղորդում մեծ կիսագնդերի կեղև
6. լույսի ճառագայթների բեկում ակնաբյուրեղով անցնելիս
7. աշք թափանցող լույսի քանակի կարգավորում

50

Ինչպիսի՞ն է արոցեսների հաջորդականությունը՝ ռեցեսիվ մուտացիաների առաջացումից մինչև նրանց՝ ֆենոտիպում արտահայտվելը: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ռեցեսիվ մուտացիա կրող օրգանիզմում գամետների առաջացում
2. մուտացիայի արտահայտում ֆենոտիպում
3. ռեցեսիվ մուտացիայի տարածում
4. ռեցեսիվ մուտացիա կրող գամետների միաձուլում
5. նուկլեոտիդների երկու զույգի փոխարինում
6. ռեցեսիվ մուտացիայի առաջացում
7. ըստ մուտանտ գենի՝ հոմոզիգոտ ձևի առաջացում

51

Նշել բոլոր ճիշտ պնդումները կենսոլորտում ազոտի շրջապտույտի վերաբերյալ.

1. ամոնիֆիկացնող բակտերիաները ամոնիակը վերածում են ամոնիումի աղերի
2. ազոտի շրջապտույտում կարևոր նշանակություն ունի կենդանիների շնչառությունը
3. դենիտրիֆիկացնող բակտերիաները նիտրատները վերականգնում են մինչև մոլեկուլային ազոտ և այն արտազատում են մքնոլորտ
4. բույսերը յուրացնում են հողում գտնվող կապված ազոտը
5. մքնոլորտային ազոտի կապումը իրականացնում են սիմբիոտիկ պալարաբակ-տերիաները, կապտականաշ ջրիմուները և որոշ ազատ ապրող հողային բակտերիաներ
6. նիտրիֆիկացնող բակտերիաներն ամոնիակը վերածում են ազոտական և ազոտային թթվի աղերի

52

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. շարժական ընտրությունը հանգեցնում է ռեակցիայի նորմայի փոփոխմանը մեկ որոշակի ուղղությամբ
2. կայունացնող ընտրությունը գործում է այն դեպքում, եթե տեղի չեն ունենում մուտացիաներ
3. մակրոէվոլյուցիայի ընթացքում տեղի է ունենում գոյության կրիվ, բնական ընտրություն, ժառանգական փոփոխականություն
4. անալոգ օրգաններ են կարտոֆիլի պալարը և սեզի կոճղարմատը
5. բնական ընտրությունը միշտ ուղղորդված բնույթ ունի
6. էվոլյուցիայի գլխավոր շարժիչ ուժը ժառանգական փոփոխականությունն է
7. բնական ընտրությունը կատարելազործում է հարմարվածությունը գոյության տվյալ պայմանների նկատմամբ

53

Նշել միայն բոլոր ճիշտ պնդումները.

1. վերջույթների մնացորդները ոռուիմենու օրգաններ են կույր օձերի և վիշապների մոտ
2. ոլորի բեղիկները, կակտուսի փշերը հոմոլոգ օրգաններ են
3. ոռուիմենու օրգանն առկա է տվյալ տեսակի բոլոր առանձնյակների մոտ
4. միամատ ձիերի ի հայտ գալն ատավիզմի դրսեռում է
5. ատավիզմները որոշ առանձնյակների մոտ հեռավոր նախնիների հատկանիշների դրսեռման արդյունք են
6. կառուցվածքով և ծագումով նման օրգանները, անկախ նրանց կատարած ֆունկցիաներից, կոչվում են անալոգ
7. թիթեռի և չղջիկի թևերը հոմոլոգ օրգաններ են

54

Զկների կառուցվածքին և կենսազործունեությանը վերաբերող ո՞ր պնդումն է ճիշտ: Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. բեղմնավորված ձկնիքում զարգացող թրթուրը սնվում է մայրական օրգանիզմի հաշվին՝ ամրանալով էզի արգանդի պատին
2. ձկների մեծ մասին հատուկ է արտաքին բեղմնավորումը
3. ձկների կրծքի և փորի զույգ լողակներն օգնում են շրջադարձեր կատարելուն
4. ողնաշարում տարբերում են երեք բաժիններ՝ պարանոցի, իրանի, պոչի
5. առջևի ուղեղից դուրս են զալիս հոտառական նյարդերը
6. ձկների մարմինը պատված է եղջերային թեփուկներով
7. ձկները բաժանասեռ կենդանիներ են

55

Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր ճիշտ պնդումները.

1. դենդրիտը նյարդային ազդակը հաղորդում է նեյրոնի մարմնին
2. ողնուղեղը գտնվում է ողնուղեղային խողովակում
3. կմախըրը կատարում է արյունաստեղծ գործառույթ
4. ֆիբրինոգենը կատալիզում է թրոմբինի վերածումը թրոմբի
5. մարդկանց 30-40%-ն ունի երրորդ խմբի արյուն
6. ներգատական գեղձերին են դասվում ենթատեսաթումբը, մակուղեղը, ենթաստամոքսային գեղձը, ճարպագեղձերը, մակերիկամները, սեռական գեղձերը
7. յոդ պարունակող հորմոն արտադրում է վահանաձև գեղձը

56

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. երկարավուն ուղեղում են գտնվում փսխման և հազի ռեֆլեքսների կենտրոնները
2. կամուրջում գտնվող կենտրոնները դեկավարում են դեմքի մկանների աշխատանքը, կոպերի քարթումը, արցունքազատումը
3. ուղեղիկը կազմված է երկու կիսագնդերից և դրանք միացնող որդանման գորշ նյութից
4. ի տարբերություն ողնուղեղի՝ երկարավուն ուղեղում գորշ նյութը գտնվում է առանձին կուտակումների՝ կորիզների տեսքով
5. ուղեղիկի վնասվելու դեպքում նրա գործառույթները կատարում են տեսաթումբը
6. գլխուղեղը 20 տարեկանում հասնում է իր վերջնական մեծությանը
7. ուղեղաբունը կազմում են երկարավուն ուղեղը, կամուրջը, միջին և միջանկյալ ուղեղները

57

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. տրանսլյացիան ԴՆԹ-ից ի-Ո-ՆԹ-ից վրա ժառանգական տեղեկատվության փոխանցման գործընթաց է
2. Սորգանի օրենքը վերաբերում է գեների շղթայակցմանը
3. առաջին սերնդում 1:1 հարաբերությունն ըստ ֆենոտիպի ստացվում է այն դեպքում, եթե ծնողական առանձնյակներից մեկը հոմոզիգոտ է՝ ըստ ոեցեսիվ ալելի, մյուսը՝ հետերոզիգոտ
4. շղթայակցման խմբերի թիվը համապատասխանում է քրոմոտոմների դիպլոիդ հավաքակազմին
5. լրացության սկզբունքն ընկած է մի քանի ամինաթթուների փոխազդեցության և սախտակուցի առաջնային կառուցվածքի ձևավորման հիմքում
6. սախտակուցի սինթեզի ընթացքում ամինաթթուների միջև պեպտիդային կապն առաջանում է ոիրոտումի գործառական կենտրոնում
7. տրանսլյացիան ժառանգական տեղեկատվությամբ փոխանակվելու ձև է

58

Ինչպե՞ս է տեղի ունենում ծաղկավոր բույսերի սեռական քազմացումը: Նշել բոլոր սխալ պատասխանները.

1. ծաղկավոր բույսերի վեգետատիվ և գեներատիվ բջիջները առաջանում են միտոզի արդյունքում
2. հասուն փոշեհատիկը պարունակում է երկու վեգետատիվ բջիջ և մեկ սպերմիում
3. սպերմիումները սաղմնապարկ են հասնում փոշեխողովակի աճի շնորհիվ
4. հասուն սաղմնապարկը պարունակում է վեց հապլոիդ և երկու դիպլոիդ բջիջներ
5. առեջի փոշանոթում միտոտիկ բաժանումների արդյունքում ձևավորվում են միկրոսպորներ
6. սաղմնապարկը զարգանում է հապլոիդ մեգասպորից
7. մի սպերմիումը միաձուլվում է ձվարջի հետ՝ առաջացնելով զիգոտ, մյուսը վերածվում է էնդոսպերմի մայրական բջջի, որից զարգանում է էնդոսպերմը

59

Գլյուկոզի ճեղքման պրոցեսում առաջացել է 364 մոլ H_2O , և անքաղածին փուլի էներգիայի կորուստը կազմել է 1960 կՋոուլ: 1 մոլ գլյուկոզից մինչև կաթնաթրու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200 կՋոուլ, իսկ ԱՎՖ-ից ԱԵՖ-ի սինթեզի համար անհրաժեշտ է 30 կՋոուլ/մոլ էներգիա: Զանի՝ կՋոուլ է կազմում ընդհանուր էներգիան:

- (60-62) $2,2545 \cdot 10^{-12}$ գ զանգվածով բակտերիայի բջջում պարունակվում է 16000 ռիբոսոմ, որոնց ընդհանուր զանգվածը կազմում է բակտերիայի զանգվածի 3,2%-ը:

60

Քանի՞ դալտոն է կազմում մեկ ռիբոսոմի միջին զանգվածը: Հաշվի առնել, որ 1 դալտոնը հավասար է $1,67 \cdot 10^{-24}$ գ: Պատասխանը բաժանել 1000-ի:

61

Սպիտակուցի քանի՞ մոլեկուլ կա մեկ ռիբոսոմում, եթե սպիտակուցի միջին մոլեկուլային զանգվածը 25000 դալտոն է և սպիտակուցների ընդհանուր զանգվածը կազմում է ռիբոսոմի զանգվածի 50%-ը:

62

Քանի՞ նուկլեոտիդից է բաղկացած ռիբոսոմի սպիտակուցը կոդավորող գենը, եթե մեկ ամինաքրվային մնացորդի միջին մոլեկուլային զանգվածը 100 դալտոն է:

63

Չերմահաղորդմամբ մաշկի միջոցով հեռանում է ջերմության մինչև 15%-ը, իսկ գոլորշիացումով՝ ջերմության 20%-ը: Օրվա ընթացքում ջերմահաղորդմամբ մարմնից հեռացել է 735 կՎ էներգիա, իսկ մարմնի մակերեսը 2 մ² է: Չանի՞ միլիզրամ քրտինքը գոլորշիացավ մաշկի 1 սմ² մակերևույթից, եթե 1 զրամ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է 2,45 կՎ էներգիա:

64

Երկրորդային մեզի 2%-ը կազմում է միզանյութը: 2 լիտր երկրորդային մեզի հետ միասին (խտությունը 1,05 գ /սմ³)՝ քանի՞ զրամ միզանյութ է հեռանում օրգանիզմից:

- (65-66) Ծանր ֆիզիկական աշխատանք կատարող մարդու արյան մեջ դիֆուզվել է 360 լ թքվածին: Աշխատանքի ժամանակ շնչառական շարժումներն արագացել են 2 անգամ, շնչառական օդի ծավալը մեծացել է 1,5 անգամ, օրգանիզմում յուրացվող թքվածնի ծավալն աճել է 25 %-ով, սրտի կծկումների հաճախականությունն աճել է 2, իսկ մեկ կծկման ժամանակ փորոքից արտանրված արյան ծավալը՝ 1,5 անգամ: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում արքուն ժամանակ կատարում է 16 շնչառական շարժում, սրտի բռնրաշրջանի տևողությունը՝ 0,8 վրկ, և մեկ կծկման ժամանակ փորոքն արտանդում է 70 մլ արյուն:

65

Քանի՞ րոպե է տևել ծանր ֆիզիկական աշխատանքը:

66

Աշխատանքի ընթացքում քանի՞ մմ³ արյուն է ստացել մեկ նեֆրոնը, եթե երիկամները ստանում են մեծ շրջան մղված արյան ծավալի 20%-ը:

67

Ալիքաձև մազերը ստացվում են որպես միջանկյալ հատկանիշ, եթե ծնողներից մեկն ունենում է գաճգուր մազեր, իսկ մյուսը՝ ուղիղ: Ալիքաձև մազերով և արյան I խմբով տղամարդն ամուսնանում է ալիքաձև մազերով և արյան III խմբով կնոջ հետ: Նրանց առաջին երեխան ուներ արյան I խումբ: Գտնել մոր ֆենոտիպով երեխա ծնվելու հավանականությունն այդ ընտանիքում (արտահայտված տոկոսներով):

68

Ֆոտոսինթեզի ժամանակ կլանվել է $3,36 \text{ m}^3 \text{ CO}_2$: Որքա՞ն օրգանական նյութ (գլյուկոզ) է սինթեզվել այդ ընթացքում (գրամ), եթե 1 մոլ գազը պարունակում է $22,4 \text{ լիտր}$ ծավալ:

69

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից մեկը.

1. ավշային մազանորները միանալով առաջացնում են խոշոր անորներ և երկու մեծ ծորաններով բացվում են լյարդի դոներակի մեջ
2. հյուսվածքային հեղուկն առաջանում է, երբ արյան պլազմայի մի մասը նրանում լուծված սննդանյութերի հետ միասին մազանորի պատով բափանցում է միջրջային տարածություն
3. ավշային մազանորները կույր ծայրով սկիզբ են առնում միջրջային տարածությունից
4. օրվա ընթացքում երկու մեծ ավշային ծորաններով արյուն է վերադառնում 2-3լ ավիշ
5. ավշային անորների ճանապարհին գտնվող ավշային հանգույցներում ձևավորվում են լիմֆոցիտներ և բրոմբոցիտներ
6. հյուսվածքային հեղուկի ծավալը 6-7 անգամ գերազանցում է արյան ծավալը

70

Օվոգենեզի վերաբերյալ տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից մեկը.

1. առաջին կարգի օվոցիտը միտոզով կիսվելով՝ վերածվում է երկրորդ կարգի օվոցիտի
2. մեյոզի առաջին բաժանումից առաջանում են երկու անհավասար հապլոիդ բջիջներ
3. 1n2c հավաքակազմ ունեցող խոշոր բջիջը կոչվում է երկրորդ կարգի օվոցիտ, իսկ փոքր բջիջը՝ ուղղորդող մարմին
4. երկրորդ կարգի օվոցիտի երկրորդ բաժանումը մեյոզի ընթացքում կանգ է առնում ալրոֆազում և շարունակվում է մինչև վերջ միայն ձվազատման պահին
5. առաջին կարգի օվոցիտներն ունեն քրոմոսոմների 4n4c հավաքակազմ
6. ձվարանների բազմացման գոտու 2n2c հավաքակազմով բջիջները կոչվում են օվոզոնիումներ